ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10. 1955 Общественные науки

Ա. Պապոյան

ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԿԱՐՍԻ ՄԱՐԶՈՒՄ 1905—1907 ԹԹ.

1905 — 1907 թթ. Ռուսաստանում բռնկված ռևոլյուցիան ոչ միայն Ռուսաստանի պատմության, այլև 20-րդ դարի համաշխարհային պատմության խոշորագույն երևույթներից մեկն է։ Այն, լինելով իմպերիալիզմի էպոխայի առաջին բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիան, լայն արձագանք գտավ Արևելքի մի շարք երկրներում։

1905 թվականի ռևոլյուցիայի առաջին ահեղ նախանշանը հանդիսացավ 1904 թ. դեկտեմբերի 13-ին սկսված Բաքվի գործադուլը։

1905 թ. հունվարի 3-ին Պետերբուրգում ծագած Պուտիլովյան գործարանի բանվորների գործադուլը բորբոքեց մասսաների ռևոլյուցիոն ոգին, իսկ հայտնի հունվարի 9-ի «Արյունոտ կիրակին» դարձավ ռուսական առաջին ռևոլյուցիայի սկիզբը։ Ամբողջ Ռուսաստանով մեկ սկսեցին մասսայական ռևոլյուցիոն շարժումները։ Այդ ռևոլյուցիոն շարժումները լայն արձագանք գտան Ռուսաստանի ծայրամասերում, մանավանդ արդյունաբերական կենտրոններում, դրանց թվում և Անդրկովկասում։

Ինչպես ամենուրեք, այնպես էլ Անդրկովկասում բոլշևիկները անցան ռևոլյուցիոն մասսաների գլուխը և կազմակերպեցին ու ղեկավարեցին նրանց համախմբված ու միասնական պայքարը ցարիզմի դեմ։ Բոլշևիկները կոչ էին անում բանվորներին բողոքի ցույցերով հանդես գալ ընդդեմ ցարիզմի, ընդդեմ ստոր, հրեշավոր այն ոճրագործության, որն արտահայտվեց հունվարի 9-ին։

Խոսելով Անդրկովկասի գավառներում ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի— բոլշևիկների ազդեցության և գյուղացիական շարժումների վերելքի մասին, Ստեփան Շահումյանը գրել է.

«Մենք պարզապես նկատում ենք, որ մեր գավառներում կյանքը փոխվում է։ Հին կարգերը կամաց-կամաց ընկնում, գահավիժում են, քաղաքական գիտակցությունը մուտք է գործում հայկական գավառները։ Երևանում, Ալեքսանդրոպոլում, Կարսում, Շամախում, Շուշում և այլն, երբեմն նույնիսկ ամենահեռավոր և ամենահետամնաց գյուղերում մենք ունենք արդեն պրոլետարական, սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ, որոնք կամաց-կամաց խմբում են իրենց շուրջը մեր գավառների կենսունակ, իսկապես ռևոլյուցիոն պրոլետարական տարրերը և կազմակերպում նրանց հանուն սոցիալիզմի...[1]։

Այդ տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում Կարսի և նրա մարզի սահմաններում տեղի ունեցած ռևոլյուցիոն անցքերի պատմությունը։

Ինչպես հայտնի է, Կարսը եղել է պատմական Հայաստանի կենտրոնական և նշանավոր նահանգներից մեկը, հարուստ պատմական անցյալով, որը բավական ուշ, միայն 1878 թվականին միացվեց Ռուսաստանին և դարձավ

[1] Ստ. Շահումյան, «Նոտիր երկեր», Հայպետհրատ, 1948, էջ 181։

Արևելյան Հայաստանի կարևոր մարզերից մեկը։ Լինելով Ռուսաստանի ամենահեռավոր ծայրամասերից մեկը, Կարսը իր հռչակավոր ամրոցով, կայազորով և ամբողջ մարզով անմաս չմնաց 1905 թվականի ռևոլյուցիոն շարժումներից։ Թեև Կարսի հայ բնակչության մեջ վաղուց արդեն բուն էին դրել հնչակյան, մանավանդ դաշնակցական կազմակերպությունները, որոնք փորձում էին հայ աշխատավորական մասսաներին թերել դեպի ազգայնական շարժումները, բայց Կարսի գիտակից բանվորներն ու արհեստավորները, մանավանդ Կարս ամրոցի ուժեղ կայազորի առաջավոր զինվորները խոշոր դեր խաղացին ռևոլյուցիոն մասսաների քաղաքական գիտակցության բարձրացման գործում և ռևոլյուցիոն շարժումների մեջ։

Մարքսիստական սոցիալ-դեմոկրատական դպրոցներն սկսեցին Կարս թափանցել դեռևս 20-րդ դարի սկզբին։ 1902—1903 թթ. այստեղ ստեղծվեցին սոցիալ-դեմոկրատական խմբակներ։ 1905 թ. սկզբին սոցիալ-դեմոկրատական խմբակ ստեղծվեց Կարսի մարզի Սարիղամիշ քաղաքում։ Այդ խմբակներում ընդգրկվում էին թե՛ Ռուսաստանի կենտրոնական մարզերից եկած բանվորները և թե՛ հայ բանվորները, արհեստավորներն ու ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչները։ Խոշոր դեր էին կատարում մանավանդ Թիֆլիս—Ալեքսանդրոպոլ—Կարս երկաթուղու բանվորները, որոնց 1905 թ. ապրիլի 5-ի գործադուլը առանձին ուշադրության է արժանի։

Լենինյան «Пролетарий» (1905), «Эхо» (1906), «Кавказский рабочий листок» (1905), «Կայծ» (1906) թերթերը բարձր գնահատական են տվել Կարսի բոլշևիկյան կազմակերպության 1905—1907 թթ. գործունեությանը։

1905 թ. ռևոլյուցիոն շարժումների մեջ առանձնապես մեծ դեր խաղացին Կարսի ամրոցի կայազորի առաջավոր զինվորները։

Ցարական բանակի շարքային զինվորները գտնվում էին կրկնապատիկ իրավազուրկ վիճակի մեջ։ Սպայությունն աշխատում էր նրանց դարձնել ցարիզմը պաշտպանելու կույր և հնազանդ գործիք, հեռու պահել աշխատավոր մասսաներից, քաղաքական կյանքի իրադարձություններից, մամուլից և կուլտուրայից։ Զինվորների նամակները ենթարկվում էին ցենզուրայի։

Չնայած այս բոլորին՝ ռևոլյուցիոն խոսքը համարձակորեն և ամեն մի դժվարություն ու արգելք հաղթահարելով թափանցում էր զորանոցներից ներս։ Զինվորական շինել հագած գյուղացին ու բանվորը չէին կարող չապրել երկրի կյանքով, լուռ հանդիսատես լինել երկրում ծավալվող ռևոլյուցիոն շարժումներին։

Այդ տեսակետից ուշադրության արժանի է 1905 թ. փետրվարի 28-ին Կարսում գտնվող 154-րդ հետևակային Դերբենդյան գնդի զինվորների մեջ տարածված ձեռագիր պրոկլամացիան, որի մեջ ասված է՝

«...Հրամանատարությունը ձեր թշնամին է, նրան լսելու հարկ չկա, «անկարգությունների» վերացման ժամանակ պետք է կրակել ոչ թե բանվորների վրա, այլ ինքնակալության դեմ։ Կորչի ինքնակալությունը, կեցցե ռևոլյուցիան» [1]։

Այս կոչի տակ ստորագրված է «154-րդ դերբենդյան հետևակային գնդի ռևոլյուցիոն կոմիտե», որից երևում է, որ զինվորների մեջ գոյություն են ունեցել ռևոլյուցիոն կոմիտեներ։

[1] ЦГИА ГрузССР, ф. 22/с, д. 26, лл. 2—3.

Զինվորները զանազան միջոցներով իմանում էին երկրում կամ բանակի շարքերում ծագած ամեն մի ըմբոստության մասին։ Ըմբոստություններ տեղի չէին ունենում ո՛չ միայն Կարսի կայազորում, այլև ամբողջ մարզի մեջ, ինչպես և նրա շրջակա մյուս քաղաքներում։ Այդ է վկայում մի փաստաթուղթ, որը պահվում է Վրացական ՍՍՌ Պետական կենտրոնական պատմական արխիվում։ Կարսի բնակիչ, Պետերբուրգի համալսարանի ուսանող Տեր-Գրիգորյանի բնակարանում կատարված խուզարկության ժամանակ հայտնաբերվում է մի նամակ, որը գրված է եղել Ախալքալակից։ Նամակագիրը հայտնում էր, որ Ախալքալակում 1905 թ. հուլիսի 18-ից սկսած ըմբոստացել են հրետանու շարքային զինվորները և 4—5 օր հրաժարվել են ճաշ ուտելուց, բողոքելով սպաների դեմ[1]։

Կարսի մարզի Կաղզվանի կայազորում տարածված «Սոլդատսկայա պասյատկա» պրոկլամացիայում գրված է հետևյալը «...Եթե քեզ տանում են գյուղ,— ասված է այդ փաստաթղթում,— կամ գործարան, և դու հեռվից տեսնում ես, որ հրապարակում հավաքված են գյուղական կամ գործարանային ամբոխ, տղամարդիկ, կանայք, երեխաներ, ծերունիներ, և այդ ժամանակ այդ ամբոխին է մոտենում դատախազ, ժանդարմ... դու զգում ես, որ քեզ բերել են այդ նույն գյուղական և գործարանային ամբոխի հուզումները խաղաղացնելու և քեզ հրաման են տալիս լցնելու հրացանը՝ մարտական փամփուշտներով, դու տեսնում ես քո առաջ այն մարդկանց, որոնց միջից են քեզ վերցրել բանակ... բեզ հրամայում են առաջին կրակը բաց անել գլխավերևից, բայց հուզված, ալեկոծված ամբոխը չի ցրվում, ավելի է փոթորկվում և ահա քեզ հրամայում են կրակել իսկական ոչ թե գլխավերևից, այլ ուղիղ ամբոխի մեջ։ Քեզ հավատացրել են, որ քո այդ կրակոցի համար պատասխանատու չես, բայց դու գիտես, որ այն մարդը, որը շաղախվում է արյունով, ընկնում է քո կրակից, սպանված է քո և ոչ ուրիշի կողմից և դու չգիտես, որ կարող էիր չկրակել և նա սպանված չէր լինի։ Քեզ ինչ է մնում անելու, բավական չէ, որ դու շրջես հրացանը և թողնես հեռանաս, որովհետև քեզ հետ նույն բանը կարող է պատահել և՛ վաղը, և՛ մյուս օրը»։ Այնուհետև ասվում էր, որ չպետք է վախենալ պետերից և չպետք է եղբայրասպան լինել[2]։

Ուրեմն, եթե ցարական սպայությունը զինվորներին դաստիարակում էր կույր հնազանդության և դեպի աշխատավոր մարդը ատելության ոգով, ապա ծավալվող ռևոլյուցիոն շարժումներն էլ կատարում էին իրենց գործը։ Ռևոլյուցիոն տրամադրությունները թափանցում էին ցարական բանակի մեջ, ամրացնում բանվորների մեջ դասակարգային գիտակցություն, պատվաստում նրանց մեջ՝ սեր դեպի աշխատավորն ու բանվորը և ատելություն դեպի ցարական իշխանությունը։ Եվ այդ աշխատանքը պարարտ հող էր գտնում բանակում, բանի որ իրենք՝ զինվորները բանվորների և գյուղացիների զավակներ էին։

Ինչպես ցույց է տվել վերոհիշյալ պրոկլամացիայի կապակցությամբ սկսված գործի քննությունը, այն գրվել և տարածվել է նույն գնդի շարքային զինվոր Իվան Անտոնովի կողմից, նշենք, որ նույն Իվան Անտոնովը մինչև զին-

---

[1] ЦГИА ГрузССР, ф. 22/е, д. 26, л. 5.

[2] Նույն տեղում, ф. 3/е, д. 168, л. 67.

վորական ծառայության անցնելը, 1903 թվականին փողոցային մարտերին մասնակցելու համար արտաքսվել էր Սարատովից [1]։

Օրեցօր աճող ռևոլյուցիոն շարժումները կասեցնելու համար ցարական կառավարությունը դիմում էր բոլոր միջոցների։ Սակայն, ինչպես ցույց տվին հետագա անցքերը, ցարիզմին չհաջողվեց հեշտորեն վերջ տալ ռևոլյուցիոն շարժումներին։

Հոկտեմբերի 13-ից սկսած գործադուլային շարժումն ընդգրկեց ամբողջ Երկիրը։ Ցարական կառավարությունն սկզբում դիմեց բռնության մեթոդին՝ մասսայական շարժումները ճնշել զինված ուժով, սակայն այդ նրան չհաջողվեց։ Հոկտեմբերի 17-ին գործադուլները դարձան համառուսաստանյան երևույթ։

«Բարոմետրը փոթորիկ է ցույց տալիս,— ասում էր Վ. Ի. Լենինը,— ... Ռևոլյուցիան առաջ է գնում ապշեցուցիչ արագությամբ, դեպքերի զարմանալի հարստություն ծավալելով... մեր առաջ են ամենամեծ քաղաքացիական պատերազմներից մեկի, ազատության համար մղվող՝ մարդկության երբևիցե ապրած պատերազմներից մեկի համակող տեսարանները...» [2]։

1905 թ. համառուսաստանյան երկաթուղայինների հոկտեմբերյան քաղաքական գործադուլին կազմակերպված ձևով մասնակցեց և Անդրկովկասյան երկաթուղագծերի բանվորությունը։ Հոկտեմբերի 14-ին լույս տեսավ Անդրկովկասյան երկաթուղայինների միության բյուրոյի կոչը, որտեղ ասվում էր, թե մոտեցել է երկարամյա ստրկությունից ազատվելու ժամը, որ երկաթուղային բազմամիլիոն աշխատավորները ևս կազատագրվեն կամայականություններից, բռնություններից և ճնշումներից։

Համառուսաստանյան քաղաքական գործադուլը ստիպեց ցարական միապետությանը որոշ զիջումներ անել։ Ցարը հարկադրված եղավ հրապարակել հոկտեմբերի 17-ի մանիֆեստը։ Այդ մանիֆեստից հետո ազատեցին քաղաքական բանտարկյալների մի մասին, դրանց թվում և Կարսի բանտի կալանավորներին, որոնք բերվել էին Բաքվից։

Դրանք Բաքվի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ղեկավար կազմի և ակտիվ աշխատողների այն մասն էին, որը ձերբակալվել էր Բաքվում և որին վախենալով պահել Բաքվի բանտում, փոխադրել էին Կարս՝ որպես ապահով վայրի։

Դրանց մեջ էին նշանավոր բոլշևիկներ Ալյոշա Ջափարիձեն, Միխայիլ Բագրաձեն, Սերգեյ Ալիլուևը, Գաբեր Կորնը և ուրիշները [3]։

Կարսի բանտից հոկտեմբերի 20-ին ազատված Բաքվի 32 բանտարկյալները հոկտեմբերի 22-ին Կարսի քաղաքային այգում կազմակերպում են ցույց, որին մասնակցում են զգալի քանակությամբ քաղաքացիներ և զինվորներ։ Օգտվելով ցարական մանիֆեստում նշված ժողովների ու խոսքի ազատության իրավունքից, նրանք հանդես են գալիս ռևոլյուցիոն ճառերով և տարածում են պրոկլամացիաներ [4]։

Չնայած ժանդարմերիայի ձեռք առած բոլոր միջոցներին, այդ քաղաքա-

---

[1] ЦГИА ГрузССР, ф. 22/е, д. 21, л. 23.
[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 9, էջ 500։
[3] ЦГИА ГрузССР, ф. 1/е, д. 86, л. 263.
[4] Նույն տեղում, ф. 1/е д. 86, л. 3—9.

կան բանտարկյալները հաջորդ օրը նույն այգում կազմակերպում են ավելի մեծ ցույց, որտեղ բացարձակ կոչ են անում՝ տապալելու գոյություն ունեցող կարգերը։ Նոր ցույցը այնքան բազմամարդ էր, որ այն ցրելու համար բերվում է 154-րդ Դերբենդյան հետևակային գունդը, որը շրջապատելով ցուցարարներին և ձերբակալելով 51 տղամարդ ու 7 կին, ցրում է ցույցը[1]։

Նույն ամսում Կարսում ընդհանուր գործադուլ են հայտարարում քաղաքի կոշկակարները և հացթուխները։

Կովկասի սոցիալ-դեմոկրատական միութենական կոմիտեն կոչ է անում ուժեղացնել ագիտացիոն աշխատանքը զինվորների մեջ, համոզելով, որ նրանց ծառայության են կանչում ոչ թե երկրի պաշտպանության համար, այլ ժողովրդի ազատագրական շարժումները ճնշելու համար[2]։

Բազմաթիվ ագիտատորներ կապ են պահպանում սոցիալ-դեմոկրատական մարզային կամ երկրային կոմիտեների հետ՝ ստանալով անհրաժեշտ ցուցումներ և ռևոլյուցիոն գրականություն։

Հոկտեմբերի 28-ին Կարսի քաղաքային այգում մի նոր ցույց է կազմակերպվում, որտեղ տարածվում են բազմաթիվ պրոկլամացիաներ։ Այդ օրվա լոզունգներն էին. «Կորչի ցարական կոնստիտուցիան, կորչի ցարական մանիֆեստը, կորչի ցարական դուման, կեցցե հաղթական ռևոլյուցիան և սահմանադիր ժողովը»[3]։

Իրար հետևից կազմակերպված այդ մի քանի ցույցերը ուժեղացնում և խորացնում են մասսաների ռևոլյուցիոն տրամադրությունները։ Այդ է վկայում ժանդարմերիական վարչության մի զեկուցագիրը, որի մեջ ասված է.

«Եղած տեղեկությունների համաձայն՝ Կարս քաղաքի բնակիչների տրամադրությունը մինչև այժմ եղել է խաղաղ, բայց մի քանի մանիֆեստացիաներից հետո դարձել է տագնապալի, շնորհիվ Կարսում հանդես եկած քաղաքական տեսակետից անհուսալի տարրերի կողմից տարված վնասակար ագիտացիայի»[4]։

Հաճախակի կրկնվող ցույցերը լուրջ անհանգստություն էին պատճառում ցարական ժանդարմերիային, մանավանդ այն պատճառով, որ Կարսի աշխատավորության ռևոլյուցիոն շարժումները ղեկավարում էին այնպիսի ականավոր բոլշևիկ գործիչներ, ինչպիսիք էին Ա. Ջափարիձեն և ուրիշները։

Հոկտեմբերի 17-ի մանիֆեստը որևէ կերպ չէր կարող կասեցնել ռևոլյուցիոն շարժումների վերելքը ինչպես ամբողջ երկրում՝ այնպես էլ տեղերում։ Չնայած այն բանին, որ մանր բուրժուական մի շարք պարտիաներ և կազմակերպություններ ցնծություն ապրող բուրժուազիայի հետ բավարարվել էին մանիֆեստով, բայց բոլշևիկների պարտիան հետևողականորեն զգուշացնում էր մասսաներին, որ ցարը դեռևս կապիտուլյացիայի չի ենթարկվել, որ նա միայն նահանջել է՝ իր դիրքերը ամրացնելու նպատակով։

Պրոլետարական ռևոլյուցիայի մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինը՝ խոսելով հոկտեմբերի 17-ի մանիֆեստի մասին, նշել է, որ թշնամին լուրջ մարտ չի ընդունել, այն նահանջել է՝ նոր դիրքեր գրավելու, նոր ուժեր հավաքելու և, հարմար մոմենտ ընտրելուց հետո, նոր հարձակում կատարելու համար։

---

[1] ЦГИА ГрузССР, ф. 1/е, д, 86, л. 3—9.
[2] Նույն տեղում, ф. 1, д. 101, л. 30—31.
[3] Նույն տեղում, л. 45—46.
[4] Նույն տեղում, ф. 1, д. 101, л. 46.

1905 թ. նոյեմբերի ընթացքում Ռուսաստանի բազմաթիվ քաղաքներում, այդ թվում Անդրկովկասի քաղաքներում (Բաքու, Թիֆլիս և այլն) շարունակվեցին գործադուլները կապի աշխատողների միջև։ Կարսի մարզում ևս կապի աշխատողները սկսեցին ընդհանուր գործադուլ, որը տևեց մի ամբողջ ամիս՝ նոյեմբերի 16-ից մինչև դեկտեմբերի 14-ը։

Այդ գործադուլի հետևանքով ամբողջովին ընդհատվեց մարզի ներքին հաղորդակցությունը, ինչպես առանձին տեղամասերի, այնպես էլ կենտրոնի միջև խախտվեց տնտեսական կյանքը։ Գործադուլը մեծ անհանգստություն պատճառեց Կարսի մարզի զինվորական նահանգապետին, որը շտապ կերպով հատուկ զեկուցագրով այդ դեպքը հայտնեց Կովկասյան ոստիկանության վարչությանը[1]։

Նոյեմբերի 22-ին 154-րդ Դերբենդյան հետևակային գնդի զինվորները կազմակերպում են ցույց՝ պահանջելով, որ իրենց արձակեն և տուն ուղարկեն։

Կարսում դրությունը գնալով լրջանում է այն պատճառով, որ այդ նույն ժամանակամիջոցում հուզումներ էին սկսվել նաև զինվորական մասերում։

Երկու օր հետո նույն գնդի զինվորները Կուբինյան փողոցում սկսում են նոր դեմոնստրացիա, իսկ դրանից մեկ օր առաջ, նոյեմբերի 23-ին, Կարս քաղաքի հին թաղամասում հայ բնակիչները կազմակերպում են ցույց, որը ցրվում է ոստիկանական ուժերով։ Ցարական ոստիկանության ձեռք առած միջոցները անկարող էին կանգնեցնել մասսաների ռևոլյուցիոն շարժումները։ Ռևոլյուցիոն գաղափարները ավելի ու ավելի էին համակում նրանց։

Նոյեմբերի 20-ին Արդահան բերդաքաղաքում նորմալ ուսումնարան բաց անելու կապակցությամբ հրավիրված ժողովում ագիտատորներն հանդես են գալիս հակապետական ճառերով և զանազան պրոկլամացիաներով[2]։

Նույն օրը Արդահանի երկդասյան դպրոցի տեսուչ Կապիտանովը դպրոցի շենքում հրավիրում է Արդահանի տարբեր հիմնարկների ծառայողներին և տեղական բնակիչներին՝ հայերին, հույներին, ռուս մալականներին, Արդահանում ժողովրդական ընթերցարան հիմնելու հարցը քննարկելու համար։

Երբ խորհրդակցությանը ներկայացած չինովնիկներն ու այլ կասկածելի տարրերը մեկնում են, ճանապարհային տեխնիկ Ցրոլովը մնացած հանդիսականների համար կարդում է հակակառավարական բովանդակություն ունեցող մի թռուցիկ՝ նվիրված հունվարի 9-ին Պետերբուրգում տեղի ունեցած դեպքերին։ Ընթերցումից հետո այդ թռուցիկի օրինակները բաժանվում են ունկնդիրներին[3]։

Նույն այդ օրերին, ինչպես երևում է ոստիկանության զեկուցագրից, Պոխովի գյուղական բժշկական քույր Օլգա Կոստյուչենկոն փորձ է անում Արդահանի կայազորում հուզումներ առաջ բերել՝ շարքային զինվորներին հանել իրենց սպաների դեմ[4]։

1905 թ. դեկտեմբերին Կարսի մարզի Սարիղամիշ քաղաքի կայազորում նույնպես տեղի են ունենում հուզումներ։ 155-րդ հետևակային Կուբինյան գնդի 3-րդ վաշտի պետին ներկայացվում է զինվորների գրավոր պահանջը, որի մեջ ասված էր, թե «ոչ մի զինվոր չպետք է հետաքրքրվի իր քաղաքական

[1] ЦГИА ГрузССР, ф. 26, д. 7, л. 1.
[2] Նույն տեղում, л. 4.
[3] Նույն տեղում, ф. 1, п. 101, л. 61.
[4] Նույն տեղում, ф. 26, д. 7, л. 58.

համոզմունքների համար»[1]։ Ցույցերը և զինվորական հուզումները գնալով ավելի ու ավելի հաճախակի են դառնում, ընդ որում դրանք ընդգրկում են ոչ միայն մարզի կենտրոնը, այլև հեռավոր վայրերը։ Ցարական ադմինիստրացիայի համար տագնապալի դրություն է ստեղծվում մանավանդ այն պատճառով, որ կապ է ստեղծվում մի կողմից զինվորների և մյուս կողմից՝ ռևոլյուցիոն բանվորական կազմակերպությունների ու նրանց ղեկավարների միջև։ Զինվորները սկսում են մասնակցել բանվորական միտինգներին, կապ են հաստատում ռևոլյուցիոն գործիչների հետ, նրանցից ստանում են համապատասխան ցուցումներ և այլն։

Զինվորներին ռևոլյուցիոն շարժման մեջ ներգրավելու ուղղությամբ հրսկայական աշխատանք են կատարում բոլշևիկ գործիչները, որոնք բազմաթիվ կոչերով, պրոկլամացիաներով, նամակներով դիմում են ինչպես զորքին, այնպես էլ սպաներին, որ դուրս չգան բանվորների և գյուղացիների ռևոլյուցիոն շարժման դեմ, այլ անցնեն ժողովրդի կողմը և միասին պայքարեն ցարական ինքնակալության դեմ։ Մի շարք պատմական վավերագրեր հաստատում են այդ բանը։

Սարիղամիշում տեղի ունեցած զինվորական հուզումների առթիվ կատարած հետաքննություններից պարզվել է, որ այդ նույն գնդի զինվորները հաճախ գնացել են Ալթունյանցին պատկանող կարի արհեստանոցը՝ միտինգների, որտեղ և դեղատան աշակերտ Պայկինը հանդես է եկել ճառերով ու առաջարկել չենթարկվել հրամանատարներին։ Այստեղ զինվորներին բաժանել են զանազան պրոկլամացիաներ, դրանցից մի քանիսը հայտնաբերվել են նույն Պայկինի մոտ՝ խուզարկության ժամանակ և ունեցել են հետևյալ վերնագրերը. «Пролетарии всех стран, соединяйтесь», «От рабочих к солдатам», «От матросов к солдатам» և այլն։

Թռուցիկներից բացի, նրա մոտ գտնվել է նաև Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիայի Ծրագիրը։ Վերոհիշյալ պրոկլամացիաները գրվել և տպագրվել են Կարսի և Ալեքսանդրոպոլի կայազորների սոց. դեմոկրատական կոմիտեների և շարքային զինվորների միության կողմից, դրանք հիմնականում հետապնդել են մի նպատակ՝ կոչ անել զինվորներին՝ պայքարի դուրս գալու ինքնակալության դեմ, հանուն Ռուսաստանում դեմոկրատական կարգերի ստեղծման։ Պայկինի մոտ հայտնաբերված մի նամակում խնդրվում է Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ղեկավարներից՝ Սարիղամիշ ուղարկել պրոպագանդիստներ, որոնք կարող լինեն զինվորների մեջ տարածել ռևոլյուցիոն գաղափարներ, խնդրվում է ուղարկել նաև մի տպագրական մեքենա, որը հնարավոր կդարձնի պրոկլամացիաների և ռևոլյուցիոն այլ կոչերի տպագրությունը։

«Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» վերնագիրը կրող կոչը տպագրված է Ռուսաստանի Սոցիալ-դեմոկրատական Բանվորական պարտիայի Ալեքսանդրոպոլի կազմակերպության կողմից՝ ռուսերեն լեզվով, որի սկզբում ասվում է, որ տանջված, խոշտանգված, բազմաչարչար ռուսական ողջ երկրի քաղցած բանվորները... հայտարարել են համընդհանուր գործադուլ, որի մասին հայտնվում է զինվորներին։ Շարադրվում են գործադուլ հայտարարելու պատճառները

[1] ЦГИА ГрузССР, ф. 23 е, д. 284, л. 3.
[2] Նույն տեղում, л. 2.

և վերջում կոչ է արվում զինվորներին, որպեսզի նրանք չհավատան և չենթարկվեն իրենց պետերին, դուրս չգան բանվորների և գյուղացիների դեմ, օրինակ չվերցնեն ավազակներից, որոնք թափում են երկրի լավագույն զավակների՝ ազատության մարտիկների արյունը։ Կոչը ավարտվում է այսպես. «Ընկեր զինվոր ...տուր քո ընկերական ձեռքը, և թող բանակի ու բանվորների դաշինքի առջև՝ դողան, ինչպես դողում են Պյատիգորսկում, Կիևում, Նովրոսիյսկում և այլն, ուր խուլիգանները, ծախու, կաշառված, անամոթ, լկտի, բայց զինված ապստամբության առջև վախկոտ պետերը խայտառակ կերպով թաքնվում են զինվորների թիկունքում և նրանց հրամայում՝ փամփուշտներ չխնայել, ժողովրդի վրա դաշարկ չկրակել»[1]։

Զինվորների և ժողովրդի եղբայրացումն ու սերտ դաշինքն ապահովելու համար Կարսի կայազորում տարածվում էին գաղտնի կոչեր։ Դրանցից մեկում ասվում է. «Զինվոր, չորս երկար տարիներ դու հանձնված ես քո պետերի կամայականությանը, չորս տարով դու բանտարկված ես ցարական հեղձացուցիչ կեղտոտ զորանոցում, որտեղ քո յուրաքանչյուր արարքը հայտնի է պետերին, չորս երկար տարիներ դատապարտված ես ստրկության»։ Կոչում առաջարկվում է լսել պետերին, չդառնալ եղբայրասպան, ապա թե ոչ, «ամենուր՝ և՛ քաղաքում, և՛ զորանոցում, և՛ դաշտում, և՛ գյուղում, ամենուրեք քեզ կհետապնդեն երեխաների բացագանչությունը՝ մարդասպան, մարդասպան։ Զինվո՛ր, այժմ ժողովրդի հետ միասին կոչի՛ր «կորչեն ցարը, իշխանները, պետերը և հարուստները, կեցցե սոցիալ-դեմոկրատական պարտիան, կեցցե ազատ Ռուսաստանը, կեցցե դեմոկրատական ռեսպուբլիկան, կեցցե բանվոր մարդիկ, կեցցե Սոցիալիզմը»[2]։

«Կարսի կայազորի ստորին աստիճանավորների միության» անունից մի այլ կոչում արտահայտված է բոլոր զինվորների եղբայրության գաղափարը, ցարական ինքնակալությունից բռնի կերպով, զինված ապստամբության միջոցով-զինվորների համար մարդկային իրավունքներ պահանջելու և ձեռք բերելու գաղափարը։ Այդ կոչում, որը վերնագրված է «Զինվորներից՝ զինվորներին», ասված է՝ «Եղբայրներ, եկել է և մեր ժամանակը, եկել է մոմենտը, երբ մենք ևս պետք է հայտարարենք, որ մեր գորշ զինվորական շինելի տակ մարդկային սիրտ է բաբախում։ Բավական է մեզ ճնշեն։ Բավական է, որ մենք լինենք մեր ճնշողների՝ պետերի անխոս ստրուկները։ Եկել է մեր համբերության վերջը ... եղբայրնե՛ր, միավորվենք մի հզոր ուժի մեջ, որին հաղթել ոչ ոք ի վիճակի չէ»[3]։ Կոչի վրա ծածկագրով գրված է. «Կուբանցիները՝ Ելիսավետպոլցիներին»՝ այսինքն՝ այդ անունը կրող գնդի զինվորներից մյուս գնդի զինվորներին։

Տեղի սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունը չէր բավարարվում միայն ռևոլյուցիոն ագիտացիայով ու պրոպագանդայով, զինվորների մեջ թռուցիկներ ու կոչեր տարածելով։ Կազմակերպությունը միաժամանակ պրակտիկ ռևոլյուցիոն աշխատանք էր տանում զինվորների մեջ, առանձնապես ատելի պետերի դեմ ըմբոստանալու, նրանց պաշտոնանկ անելու համար։

---

[1] ԿՊԳԻԱ ԳրուզՍՍՀ, ֆ. 23/c, դ. 284, լ. 100.
[2] Նույն տեղում, լ. 102.
[3] Նույն տեղում, ֆ. 23/c, դ. 284, լ. 100—104.

Կազմակերպությունը միաժամանակ նկատելի աշխատանք էր կատարում սպաների մեջ, ընդհանուր շարժման մեջ նրանց ներգրավելու նպատակով։ Այդ տեսակետից ուշագրավ է Կարսում և Սարիղամիշում գործող ռևոլյուցիոներ Պայկինի մի նամակի սևագիրը, ուղղված սպայությանը։ Այդ նամակում կարդում ենք.

«Պարոնայք օֆիցերներ. մենք ապրում ենք փառապանծ էպոխա՝ ռևոլյուցիայի էպոխան։ Ինքնակալությունը, որպես անբուժելի հիվանդ, ցանկանում է իր կյանքը շարունակել ... Բայց մենք տեսնում ենք, որ ժողովուրդն սկսել է այնքան հասկանալ դեմոկրատական կարգերի ճշմարիտ բարիքները, այնքան ուժեղ է դարձել, որ կառավարությունը ի վիճակի չէ կանգնելու ռուս ժողովրդի ուժեղ թափի առջև։ Դուք, պարոնայք օֆիցերներ, ռուս ժողովրդի հասարակության մասն եք, դուք պետք է միանաք ժողովրդին և նրա հետ պահանջեք այն, ինչ պահանջում է ամբողջ գիտակից ռուս ժողովուրդը։ Դուք այդ պետք է կատարեք, որպեսզի քավեք ձեր սխալները և որպեսզի մտնեք ժողովրդի մեջ՝ որպես ազատ քաղաքացիներ, ազատ պետությունում, և որպեսզի ժողովուրդը չհատուցի անմեղորեն թափված արյան համար... Ձեր ձեռքերումն է գտնվում ժողովրդի այն մասը, որի մեջ դեռևս գիտակցությունը քիչ է ներթափանցել, բայց որը ծարավի է գիտության։ Ահա ձեզ աշխատանքի համար հող։ Գնացե՛ք նրանց մոտ, մոտեցե՛ք նրանց»...[1]։

Վերոհիշյալ Պայկինը Կարսի կայազորում ռևոլյուցիոն պրոպագանդիստական աշխատանք կատարող կենտրոնական դեմքերից մեկն է եղել։ 1905 թ. հունիսի 21-ին Կարս քաղաքում ոստիկանների առանձին կորպուսի Բոտմիտոր Կամենսկին խուզարկություն է կատարում նրա բնակարանում և բանտարկում նրան. բանտից ազատվելուց հետո նա շարունակել է իր ռևոլյուցիոն գործունեությունը։

Արդահանում, դեկտեմբեր ամսին, 274-րդ հետևակային գնդի զորանոցում, Պայկինը դեղագործի օգնական Օեյտլինի միջոցով տարածել է թռուցիկներ, որոնց մեջ կոչ էր արվում զինվորներին՝ չկրակել ժողովրդի վրա, հրաժարվել հրամանատարների հրամանները կատարելուց։

1905 թ. դեկտեմբերին, Սարիղամիշում Պայկինը փորձել է զինվորների մեջ տարածել պրոկլամացիաներ, որոնք իրենց մեջ բովանդակել են ՌՍԴԲՊ-ի մինիմում ծրագիրը՝ ցարական միապետության տապալումը և դեմոկրատական ռեսպուբլիկայի ստեղծումը։ Նույն Պայկինը ագիտացիոն եռուն աշխատանք է ծավալել Կաղզվանում, ինչպես 155-րդ հետևակային գնդի զինվորների, այնպես էլ տեղական բնակիչների մեջ։ Նրա ագիտացիան իրոք պարարտ հող է ունեցել, Պայկինի մոտ, խուզարկության ժամանակ գտնված նամակներից մեկում, որը ուղղված է եղել իր ընկերոջը, ասված է։

«Կաղզվանում, զինվորների մեջ ռևոլյուցիոն գաղափարներ տարածելու համար, լավ հող կա։ Անհրաժեշտ է, որ Կաղզվան գան զինվորների կենցաղն իմացող փորձված ագիտատորներ և գաղտնի տպարան ստեղծեն՝ թռուցիկներ տպելու համար»[2]։ Այդ միևնույն նամակում Պայկինը պրոպագանդայի համար միանգամայն հարմար վայր է համարում նաև Սարիղամիշը, որտեղ կենտրո-

[1] ՊՊԳԻԱ ԳրուզՍՍՀ, ֆ. 23/e, դ. 284, լ. 100—104.
[2] Նույն տեղում, ֆ. 27/e, դ. 83, 89, լ. 3—4.

նացված էին այնպիսի զորամասեր, որոնք անհրաժեշտության դեպքում ուղարկվում էին ըմբոստացած ժողովրդի դեմ։ Նա պահանջել է Սարիղամիշում ևս ստեղծել տպարան, որտեղ հնարավոր լիներ տպագրել ագիտացիոն բնույթ կրող սոցիալ-դեմոկրատական դրականություն։

Լենինյան ծրագրով՝ զինված ապստամբություն նախապատրաստելու գործում Անդրկովկասում աչքի ընկնող դեր են կատարել Ի. Վ. Ստալինը, Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ս. Օրջոնիկիձեն, Ա. Ջափարիձեն (վերջինս նաև Կարսում և Կարսի մարզում) և ուրիշներ։

Դեկտեմբերյան զինված ապստամբությունը զարգացավ անհավասար կերպով։ Այն ժամանակ, երբ Մոսկվայի պրոլետարիատը կռվում էր բարիկադների վրա, մյուս վայրերի պրոլետարիատն ու գյուղացիությունը միայն նախապատրաստվում էին ապստամբության։ Հենց այդ հանգամանքն էլ հնարավորություն տվեց ցարական պատժիչ ջոկատներին՝ հերթով ճնշելու առանձին-առանձին սկսված ապստամբությունները։

1905 թ. դեկտեմբերյան զինված ապստամբությունը եղել է ռևոլյուցիայի զարգացման ամենաբարձր կետը, որի պարտությունից հետո, ինչպես ասում է Լենինը, սկսում է ռևոլյուցիոն շարժման աստիճանական վայրէջքը։ Ցարական կառավարությունը, օգտագործելով այդ հանգամանքը, անցնում է հարձակման ամբողջ երկրում, գործի են դրվում պատժիչ ջոկատները։ Անդրկովկասում ռևոլյուցիոն շարժումները ճնշելու գործը գլխավորում էր ցարական դահիճներից մեկը՝ Ալիխանով—Ավարսկին, որը, կանգ չառնելով ոչ մի դաժանության առաջ՝ արյան մեջ խեղդեց յուրաքանչյուր շարժում։

1905—1907 թթ. Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժումների թուլացման և ճնշման մեջ զգալի դեր խաղաց և ցարիզմի վարած ազգային քաղաքականությունը՝ հայ-թյուրքական կոտորածների կազմակերպումը[1]։

Ազգամիջյան ընդհարումների պրովոկացիոն փորձեր են արվում նաև տարբեր ժողովուրդներով բնակված Կարսի մարզում։ Այդ երևում է Կարսի զեներալ նահանգապետի 1905 թ. օգոստոսի 20-ի, Կովկասի ոստիկանական վարչությանը ուղղված զեկուցագրից[2]։

1906 թ. օգոստոսի 19-ի օրենքով ամենուրեք սկսում են գործել ռազմադաշտային դատարանները, որոնք առանձին դաժանություն են հանդես բերում ազգային մարզերում։ Ռազմական դատարանների հետ միաժամանակ գործի են անցնում սևհարյուրյակային միությունները, և իրենք՝ կապիտալիստները։ «Անվստահելի» և «անհուսալի» մարդկանց սև ցուցակներ են կազմվում, և գործարաններից դուրս շպրտվում դիտակից և ռևոլյուցիոն բանվորները։ Այնուամենայնիվ, ռևոլյուցիան հեշտությամբ չէ, որ ճնշվում է. բանվորներն ու ռևոլյուցիոն գյուղացիները նահանջում են մարտերով։ Գործադուլներ և ռևոլյուցիոն շարժումները շարունակվում են դեկտեմբերյան զինված ապստամբության պարտությունից հետո։

Ռևոլյուցիոն պրոպագանդան շարունակվում է նաև բանակի մեջ։ Այդ տեսակետից առաջին շարքերում մնում է Կարսի կայազորը։ Ուշագրավ փաստ է հրետանային Պոլիշչուկի գործը 1906 թվականին։ Վերջինս, վերադառնալով Թիֆլիսի զինվորական հիվանդանոցից, իր հետ բերում է մի շարք կոչեր, որոնք

[1] Ցարիզմի ազգային ռեակցիոն քաղաքականության դեմ ուղղված դոկումենտներից մեկն է ՌՍԴԲՊ Կարսի դրուպայի 1905 թ. հոկտեմբերի 26-ի № 7 կոչը։

[2] ЦГИА ГрузССР, ф. 1, д. 101, л. 4.

տարածվում են զինվորների մեջ։ Դրանից հետո Պոլիշչուկը նամակով ստանում է նաև ՌՍԴԲՊ Թիֆլիսի զինվորական Կոմիտեի կողմից հրատարակված «Գոլոս կազարմի» զինվորական թերթը (1906 թ. դեկտ. 14), որը պարունակել է հակապետական մի քանի հոդվածներ, ինչպես՝ «Ընկեր զինվորներ», «Նամակ գյուղից» և «Նամակ սպաներից զինվորներին» հոդվածները։ Այդ հոդվածներում կոչ էր արվում շարքային զինվորներին՝ չկրակել բանվորների ու գյուղացիների վրա, միանալ ժողովրդին և միասին կռվել ցարական կառավարության դեմ, տապալել ցարին։ «Նամակ գյուղից»[1] անստորագիր հոդվածում, ասված էր, որ զինվորը չպետք է ջանասիրաբար ծառայի ցարին, այլ գիտակցի, թե ում համար է ծառայում և ապստամբվի, զենքը դարձնի ցարիզմի դեմ։

Չնայած 1905—1907 թթ. ռևոլյուցիան վերջացավ պարտությամբ, բայց նա բացառիկ մեծ դեր կատարեց։ Ընդամենը երեք տարվա ընթացքում բանվոր դասակարգն ու գյուղացիությունը ձեռք բերին մի քանի տասնյակ տարիների ռևոլյուցիոն փորձ։ Ռևոլյուցիոն գաղափարներն այնքան խոր արմատներ էին դրել բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության մեջ, որ նույնիսկ ստոլիպինյան դաժան ռեակցիայի տարիներին շարունակվեցին բանվորական, գյուղացիական և զինվորական շարժումները։ 1907 թ. Հայաստանում տեղի ունեցան մի շարք գործադուլներ, ինչպես Ղափանում։ 1908 թ. ապրիլի 29-ին Կարսի ամրոցի բանվորները հայտարարելով գործադուլ, հավաքվում են մարզի զինվորական նահանգապետության շենքի առաջ և իրենց ներկայացուցիչներն են ուղարկում նահանգապետի մոտ, պահանջելով աշխատավարձի բարձրացում։ Նահանգապետը նրանց պահանջը չի բավարարում. վերջիններս շարունակում են գործադուլը, և միայն երեք օր հետո, երբ նրանց օրական աշխատավարձը 50 կոպեկից բարձրացվում է 80 կոպեկի, անցնում են աշխատանքի[2]։ Նույն թվականի հունիսի 11-ին գործադուլ են հայտարարում Կարսի ամրոցի Կարադաղյան բարձրությունների վրա ամրություններ կառուցող բանվորները։ Գործադուլի պատճառը եղել է այն, որ կապալառուն, հակառակ պայմանագրի, որի համաձայն բանվորները պետք է աշխատեին առավոտյան ժամը 6-ից մինչև երեկոյան 6-ը, բանվորներին աշխատեցրել է առավոտյան ժամը 5-ից մինչև երեկոյան ժամը 7-ը։ Այդ գործադուլը ղեկավարել է Կարս քաղաքի բնակիչ Սեդրակ Գրիգորյանը, որը թեև անմիջապես ձերբակալվել է, բայց բանվորները շարունակել են գործադուլը, մինչև որ կապալառուն ստիպված է եղել զիջել բանվորներին։

Ստոլիպինյան ռեակցիայի տարիներին ռևոլյուցիոն պրոպագանդան շարունակվում է նաև զորամասերում. այսպես 1909 թ. մայիսի 4-ին Կարսի ամրոցային հրետանու ավագ Իվան Կուշչևը հակացարական թռուցիկներ է տարածում զինվորների մեջ, նրանց հետ գաղտնի զրույցներ է ունենում, բացատրում, որ զորքը ծառայում է ոչ թե հայրենիքին, այլ նրանց, ովքեր շատ հող ունեն, որ հարկավոր է այդ հարուստ հողատերերից բռնագրավել հողը և տալ ժողովրդին։

Ինչպես երևում է դատավարության պրոցեսից, Կուշչևը զինվորներին ասել է, որ այն գմբեթը, որ կազմում է ցարը և կառավարությունը թշնամի է ժողովրդին և որ հարկավոր է ապստամբվել. այն ժամանակ այդ աշտարակը կփլվի,

[1] ЦГИА, ф. 22, д. 112, лл. 3—4.
[2] Նույն տեղում, ф. 3, д. 129, л. 1, 5.

և ցարն ու կառավարությունը կընկնեն ժողովրդի ոտքերի տակ, որից հետո ժողովուրդը կանի այն, ինչ ցանկանում է։ Նա զինվորներին կոչ է արել դուրս գալ ցարիզմի դեմ, տապալել այն [1]։

Կարսի, Սարիղամիշի և Ալեքսանդրոպոլի բնակչության մեջ սկսված ռևոլյուցիոն խմորումները շարունակվեցին մինչև 1917 թ. և դրանից հետո՝ մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը. և պատահական չէ, որ 1920 թ. Հայաստանի Մայիսյան ապստամբության ժամանակ այդ քաղաքների բանվորներն և զինվորները Հայաստանում Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ հանդես եկան կազմակերպված ձևով և ամենափայլուն էջը գրեցին Հայաստանի ռևոլյուցիոն շարժումների պատմության մեջ։

---

[1] ЦГИА ГрузССР, ф. 3, д. 129, л. 27.